

ՄԱՍԵԱՅ ԱՂԱԿԵՐ



BREITEL D.

L. DUJARDIN S.

ԱԻԵՏԱԲԵՐ  
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

հրատարակելի ազգասեր ստորագրեամբ

ՊԱՐՈՆ ԵՒՈՒՍՐԻՍՑ ԹԱՓԱՅԵԼԻ ՂԱՐԱՄԵԱՆ

Ս. ՏԱՐԻ. — ԴԵԿՏԵՄԲԵՐ, 1855. — ԹԻՒ ԺԲ.

Ի ՓԱՐԻԶ

Ի ԳՐԱԿԱՅԻ ՊԱՐՈՆ Ճ. ԱՐԱՄԵԱՆ

Ի Փողոցն Սեն-Սիրաքիս, Թ. 38.

Գործակալք

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ  
ԱԻԵՏԻՍ ԱՂԱՅ ՊԵՐՊԵՌԵԱՆ.  
ԶՄԻՆՈՆԻՍ  
ՂՈՒԿԱՍ ԱՂԱՅ ՊԱՂԻԲԱԶԱՐԵԱՆ.

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՍ  
ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅ ՏԵՐ-ԳԱՍՊԱՐԵԱՆ.  
ԵՍՇ ՄՈՒՏԱԿԻՈՑ  
ԳԱՄԻՆՍԻ ՅԱԿՈԲ ԱՂԱՅ ՊԵՐՎԵԼԵԱՆ



# ՄԱՍԵԱՅ ԱՂԱԿՆԻ



SCALFE. D.

L. DUBARDIN S.

## Ա.Ի.ԵՏԱ.ԲԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

### Ա. ԿԵՆՑԱՂՕԳՈՒՏ ԲԱՆՔ

ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆ ԳՏՆԵՆՈՒ ԳԱՂՏՆԻԲԸ

Կան սակաւարիւ մարդիկ որ բարերադոբեան համար ծնած կերելին. կան ուրիշներ ալ որոց ճակատագիրը կարծես քեզ զիրենք յախտնական յաշոդոբեան եւ ճախորդոբեան դատապարտած է : Նախնիք բաղդը կոյր աստուածունի մը կերպարանքով կրճեւացընէին, որովհետեւ իր պարգևները առանց ընտրութեան կրբաշխէ. աւելի մօտ ժամանակներս ալ շատերը հաւատալին՝ քեզ մարդս որ աստղին տակն որ ծներ է՝ իր բաղդն ալ ընդհանրապէս անոր ազդեցութիւններովը կըկատարուի : Այս սնապաշտութիւնները որքա՞նք ծաղրելի բաներ ալ են՝ գոնէ այս կըցուցընեն քեզ արժանաւորութեան ու յաշոդոբեան իրարու հետ ունեցած կապակցութիւնը քեզտ շատ յայտնի չէ, բայց այն կապակցութեան մշտնջենաւոր ըլլալուն տարակոյս չկայ : Աշխարհիս մէջ յաշոդոբիւն գտնելը ըստ ինքեան

մարդուս արդիւնք ունենալուն ապացոյց մըն է : Իրաւ է որ այս արդիւնքը կրնայ հասարակ բան մը համարուիլ, բայց միշտ օգտակար է : Մենք ալ կրնաստատենք որ մտաց այն յատկութիւնները որ մարդուս յաշոդոբիւն գտնել կուտան կենացը մէջ՝ ըստ մեծի մասին վնասակար են հանճարի. սակայն ամենամեծ հանճարի տեր մարդկանց բազմաթիւ երեւելի օրինակները կրնանք մէջ բերել որ իրենց աշխարհային իմաստութիւնը ապուշ մարդկանց ունեցած խելքէն բնաւ տարբերութիւն մը չունի : Առաւել հանճարաւոր երեւնալու ցանկացողներն են քան քեզ իրօք ունեցողները՝ որ հասարակ մարդկանց վարքը կարգի դնող խոհեմութեան կանոններէն դուրս մնալ կուզեն, կարծելով քեզ իրենք զիրենք հանճարի տգեղութիւններովը կրնան ծածկել. չեն մտածեր քեզ անոր գեղեցկութիւնները այն կանոններն են :



Բանի մը տեսակ անխոհեմութիւններ կան որ կը կարծենք թէ սաստիկ երեւակայութեան եւ զգայուն բնաւորութեան տէր մարդկանց բնական ժառանգութիւն մը եղած է. այս բանիս համար նոյնքան անիրաւ կըլլար զանոնք խստիւ դատապարտելը՝ որչափ որ անիրաւ պիտի ըլլար երբոր խոհեմութեան այն հանդարտ գաւկըններուն մէկը պարսաւէինք՝ բանաստեղծական կրակէ գուրկ ըլլալուն համար : Սակայն խոհեմութեան դէմ եղած խոտորումները մէյմէկ յանցանք են. եւ երբեմն թէ եւ ներուելու ըլլան՝ պէտք չէ որ այն խոտորումներուն հետեւինք :

Յաջողութիւն գտնելուն ամենէն հարկաւոր ճամբան խնայութիւնն է. խնայութիւն դրամի եւ խնայութիւն ժամանակի : Խնայութիւն որ կը սեմ՝ կարօտութեամբ ապրիլ ըսել չէ միտքս, այլ միայն անանկ առողջարար չափաւորութիւն մը որ առանց շահ մը կամ վայելք մը ձեռք բերելու՝ մեր ժամանակը կամ դրամը վատնելէն զմեզ եւ կը կեցընէ : Ժամանակը խնայութեամբ գործածելով ատեն կը վատարկինք ու գործերնուս մէջ կարգ եւ կանոն կունենանք. կարող կըլլանք մեր գործերը առաջ քշելու՝ առանց մենք անոնցմէ քշուելու : Ժամանակնիս ու եկամուտնիս աղէկ ջնաշուելէն ծագած հետեւանքները մեծապէս աղետալի են. վասն զի զմեզ մշտնջենաւոր տաղնապի ու նեղութեան մէջ կը ձգեն : Այսպիսի նեղութեան մէջ՝ ամենէն պայծառ տաղանդներն անգամ հարկաւ անպտուղ կը մնան, եւ հնարագիտութեամբ անցուած կեանքին վախճանն ալ չբարորութիւն է :

Ուրեմն աշխարհի մէջ յաջողութիւն գտնելու համար մեր տալիք նուսխան սա է. « Շատ պահէ ու քիչ վատնէ : » Ով որ այս խրատին հետեւի՝ հարկաւ յաջողութիւն պիտի գտնէ. իսկ ասոր հակառակն ընողը պիտի զխանայ որ անշուշտ անկարծելի դիպուածի մը կամ մարդուս նախատեսութեանը անդարմանելի փորձանքի մը պիտի պա-

տանի, զոր օրինակ հիւանդութեան, հրդեհի, կամ նախախնամութեան ուրիշ մէկ այցելութեանը, որով յառաջադիմութիւնը արգիլուած պիտի ըլլայ : Բայց մարդկային իրողութեանց հասարակ ընթացքին մէջ՝ յաջողութիւնը միշտ անբաժանելի պիտի ըլլայ խնայութենէն՝ որ երջանկութիւն ձեռք բերելու միակ պայմանն է :

Այս ալ կայ որ աշխարհային յաջողութիւնը՝ որուն առ հասարակ ամէն մարդ կը տենչայ՝ այնչափ մը միայն փափաքելի է՝ որչափ որ մարդուս երջանկութեանը հարկաւոր է. երջանկութիւնն ալ խիստ քիչ հարկաւոր կըլլայ՝ թէ որ ամենայն մարդկանց վրայ սաստիկ բարեսիրութիւն մը չունենանք : Շատ աղէկ կերպով ըսած են թէ « երջանկութիւնը՝ մեր սիրած եւ մեզ սիրող իրաց բոլորն համեմատութեամբն է : » Այս խրատը մենք սրտի մտօք կընդունինք, եւ կըրցանկանք որ ամենուն սրտին վրայ ալ գրուած ու գրասիրութեան պըտուղները առած տեսնենք :

Այն մարդն որ ուրիշի բշուառութիւնը տեսած ատեն քերեսութեամբ կը վարուի, ու սիրելութեան բովիչ կապովը՝ իր նմանեացը հետ կապուած չէ, որչափ ալ անուանի, բաղդաւոր ու խելացի ըլլայ՝ արհամարհութեան արժանի է, եւ անշուշտ ալ պիտի արհամարհուի մարդկային ազգէն : Այնպիսոյն վրայ բաղդին պարգևներուն ամենն ալ պարապը նետուած են : Իրեն համար երջանկութիւն չկայ. իր կեանքը երազ մը՝ լոկ բմբուրիւն մի է, ու մարդկային զգացողութեան մէկ գարնուածքը անգամ չունի սրտին մէջ. եւ պիտի իջնայ գերեզմանը *առանց լացի, առանց պատուոյ, եւ առանց գովասանքի* : Այսպիսի բաղդը ցանկալի բաղդ մը չէ, եւ ով որ յաջողութիւն գտնելու գէ, բող բնաւ մտքէն չհանէ այս բանս որ առանց երջանկութեան յաջողութիւնը ոչինչ է :

Թարգմանեաց յանդիպական

Ն. Մ. ՉՕՐԱՅԵՍԵԱՆ :

## Բ. ՏԵՍԱՐԱՆՔ Ե ԻՐՈՊՍՅ

ԿՈՍՏԱՆԳՆՈՒԳՈՒԹՅՈՒՆ .

Երուպացւոց արեւելքին վրայ ունեցած տեղեկութիւնները գրեթէ նոյնչափ անկատար են՝ որչափ արեւելցւոց եւրոպայի վրայ ունեցածները :

Երկու կողմէն ալ ատեն ատեն խելացի ու դիտող ճանապարհորդներ իրենց տեսած երկիրներուն ու սովորութեանցը վրայ տեղեկութիւններ գրե-



նն, բայց ոչ երբեք սեպհական հայրենեաց յատկո-  
րիւնները եւ իրենց վարժած սովորութիւնները  
մեկի դրեր ու անտարբեր եւ անաչառ մտօք ըրեր  
նն իրենց զննութիւնները : Այսու ամենայնիւ  
նտաքրքրական բան է անոնց ըրած դիտողու-  
թիւնները կարգալ կամ լսելը, մանաւանդ խիստ  
երեւելիներունը :

Արեւելք ճամբորդութիւն ընող, եւ ընդհանրա-  
պէս ամեն բանին աղէկ կողմը միայն տեսնող  
զմայրող ու զեղեցիկ բանաստեղծութեամբ մը

Վոսփորի նեղուցէն դեռ հիմա վար իշայ ու  
նորէն վեր ելայ մինչեւ Սեւ ծովուն բերանը . հոս  
ինձի համար այն հրասքանջ տեսարանին պատ-  
կերը վեր ի վերոյ մը գծագրեմ : Մտքես անգամ  
չէր անցած որ երկինքն ու երկիրս, ծովն ու  
աղամորդին խօսք դրածի պէս ըլլան իրարու  
նետ՝ այսպիսի հրաշալի տեսարաններ ձեւացրնե-  
լու : Թափանցիկ երկնքին եւ կամ ծովուն հայելին  
է միայն որ կրնայ այն տեսքը ամբողջ իր մէջն  
ընդունիլ ու ճիշդ ցոյցաբերել . իմ երեւակայութիւնս  
ալ զանոնք կրտսնէ ու կրմբոնէ : Բայց միտքս  
անոնց ամբողջ պատկերը չկրնար պանել ու նկա-  
րագրել՝ երէ ոչ քանի մը մանր պարագաներով  
ու ետեւէ ետեւ : Ուրեմն սկսինք մեկիկ մեկիկ զիր  
անցընել այս եւ այն տեսարանը, այս եւ այն  
հրուանդանը, այս եւ այն ծովածոցը, այս եւ այն  
բիակներուն ետեւէ ետեւ զարնուածքը : Ամեն  
մեկ տեսքը միայն նկարել ուզող պատկերահա-  
նը տարիներով աշխատելու կարօտ է : Ամեն մեկ  
նայուածքիդ՝ տեսարանը կը փոխուի, եւ քանի  
որ փոփոխի՝ աւելի զեղեցիկ կերեւայ : Ես քանի  
մը խօսքով ինչ կրնամ ըսել :

Մեկ առաւօտ մը որ երկնքին երեսը պարզ եւ  
արեւը պայծառ էր՝ ժամը եօթնին միս-մինակ  
մտայ այն երկայն ու բարակ նաւակներէն մեկուն  
մէջ որ ձկան պէս կը ճղքեն ծովն ու կը սահին,  
բիավարներս ալ չորս հատ Առնաւուտ : Նաւակին  
մէջ բարգման մը երկնցած՝ տեսած բաներուս  
անուններն ու ինչ ըլլալը կը զուրցեր : Առաջ Թոփ-  
հանէի ծովափանցը ու հրազինաւորաց ձմբոցին  
առջեւէն անցանք : Թոփհանէին գոյնզգոյն տները  
աստիճան աստիճան իրարու վրայ բարձրացած,  
մարմարաշէն մզկիթն չորս բոլորը զիգուած ծաղ-  
կըներու փունջի մը կրնմանէին, ու Պեյօղլուի գե-  
րեզմաննոցին նոճիներուն տակը կերբային կար-  
ծես քէ կըրաղուէին : Այս կողմէն ծովեզերքի  
բլուրներուն ծածկողը այն մօր ծառաստանին  
վարագոյրն է : Մեր սահած ճամբուն երկու կողմը

պատմող եւրոպացին պարոն Լամարքին գաղ-  
ղիացին է : Բանի որ մեր ազգին մէջ իր *Ուղե-  
բութիւն յԱրեւելս* ըսուած գրքին ամբողջ թարգմա-  
նութիւնը չկայ, ատեն ատեն հատուածները կըր-  
նանք հրատարակել՝ բնագրովը հանդերձ . թարգ-  
մանութիւնը մերազնեայ ընթերցողաց համար,  
իսկ բնագիրը այն եւրոպացոց որ առիթ չեն ու-  
նեցած ամբողջ գիրքը կարդալու :

Այս անգամ Կոստանդնուպօլսոյ վրայ գրածնե-  
րուն մեկ կտորը մէջ բերենք :


Je viens de descendre et de remonter le canal du  
Bosphore de Constantinople à l'embouchure de la  
mer Noire. Je veux esquisser pour moi quelques  
traits de cette nature enchantée. Je ne croyais pas  
que le ciel, la terre, la mer et l'homme pussent  
enfanter de concert d'aussi ravissants paysages. Le  
miroir transparent du ciel ou de la mer peut seul  
les voir et les réfléchir tout entiers : mon imagina-  
tion les voit et les conserve ainsi ; mais mon souve-  
nir ne peut les garder et les peindre que par quel-  
ques détails successifs. Écrivons donc vue par vue,  
cap par cap, anse par anse, coup de rame par coup  
de rame. Il faudrait des années à un peintre pour  
rendre une seule des rives du Bosphore. Le pays  
change à chaque regard, et toujours il se renou-  
velle aussi beau en se variant. Que puis-je dire en  
quelques paroles?

Conduit, par quatre rameurs arnautes, dans un  
de ces longs caïques qui fendent la mer comme un  
poisson, je me suis embarqué seul, à sept heures  
du matin, par un ciel pur et par un soleil écla-  
tant. Un interprète couché dans la barque, entre  
les rameurs et moi, me disait les noms et les  
choses. Nous avons longé d'abord les quais de To-  
phana, avec sa caserne d'artillerie. La ville de To-  
phana, s'élevant en gradins de maisons peintes,  
comme des bouquets de fleurs groupés autour de la  
mosquée de marbre, allait mourir sous les hauts  
cypres du grand champ des Morts de Péra. Ce ri-  
deau de bois sombre termine les collines de ce côté.  
Nous glissions à travers une foule de bâtiments à  
l'ancre, et de caïques innombrables qui ramenaient à  
Constantinople les officiers du sérail, les ministres



խուռն բազմութեամբ նաւեր երկար ձգած կեցեր էին, եւ անհամար նաւակներու մեջ մտած Կոստանդնուպօլիս կրդառնային արքունեաց պաշտօնատերները, ոստիկանները, անոնց փոխանորդները, եւ Հայ տանուտերներու մարդիկն որ իրենց խանութները կերբային աշխատանքի սկսելու: Այս Հայերը շատ փառանդ մարդիկ են. հագուստին վայելուչ է եւ անպաճոյճ, գլուխին սեւ փարբոց, վրանին երկայն ու կապտագոյն վերարկու, մեջքերին ճերմակ քաշմիր շայեգօտի. կազմուածքնին յաղթանդամ, կերպարանքին արքուն ու խորագետ' բայց հասարակ, գոյներին մուր, աչուրնին կապոյտ, մօրուքնին դեղնագոյն. ասոնք Արեւելքի Զուլիցերացիներն են. անոնց պէս աշխատասեր, հանգարտարարոյ, բարեկարգ, բայց անոնց պէս ալ իրենց շահը չաւ հասկըցող ու փնտող. իրենց առուտուրի յարմար հանձարը կրբանեցրնեն' բազառքեն ու Տաճկներէն ստակ վաստրկելու. այսմարդկանց վրայ ամենեւին դիւցազնական ու պատերազմական հոգի չկայ. իրենց հանձարը վաճառականութիւն է.

et leurs kiaias, et les familles des Arméniens que l'heure du travail rappelle à leurs comptoirs. Ces Arméniens sont une race d'hommes superbes, vêtus noblement et simplement d'un turban noir et d'une longue robe bleue, nouée au corps par un châle de cachemire blanc; leurs formes sont athlétiques; leurs physionomies intelligentes, mais communes; le teint coloré, l'œil bleu, la barbe blonde; ce sont les Suisses de l'Orient; laborieux, paisibles, réguliers comme eux, mais comme eux calculateurs et cupides: ils mettent leur génie trafiquant aux gages du sultan ou des Turcs; rien d'héroïque ni de belliqueux dans cette race d'hommes: le commerce est leur génie; ils le feront sous tous les maîtres. Ce sont les chrétiens qui sympathisent le mieux avec les Turcs. Ils prospèrent, et accumulent les richesses que les Turcs négligent, et qui échappent aux Grecs et aux Juifs: tout est ici entre leurs mains; ils sont les drogmans de tous les pachas et de tous les vizirs. Leurs femmes, dont les traits aussi purs, mais plus délicats, rappellent la beauté



Կոստանդնուպօլիս:



տերերին ո՞վ ալ ըլլայ՝ առուտուրէ ետ ջնն կենար : Քրիստոնէից մէջ ասոնց պէս Տաճկաց հետ յարմարող ու անոնց սիրելի ազգ չկայ : Տաճկըններուն գանց ըրած եւ Յունաց ու Հրեից ձեռքէն փախած հարստութիւնները Հայերը կրղիգեն ու կրհարըստնան . հոս ամեն բան անոնց ձեռքն է : բոլոր փաշաներուն ու վեզիրներուն բարգամաններն իրենք են : Հայոց կանանց կերպարանքն ալ նոյնպէս կանոնաւոր՝ բայց աւելի քնքուշ է, եւ անգղիացի կնիկ մարդկանց կամ Հնդուեստիոյ լեռներուն գեղջկուհեաց հանդարտ գեղեցկութիւնը միտքդ կըձգէ . քէ անոնք եւ քէ տղաքը սքանչելի են : Նաւակները լեցուն են Հայերով, որ իրենց գեղի տներէն սապատներով ծաղկըներ կըբերեն՝ նաւակներուն առաջքը շարած :

Հիմա կըսկսինք թոփհանէի ծայրէն անդին դառնալ ու օսմանեան նաւատորմդին Բումէլիի ծովեզերքը կեցած մեծամեծ պատերազմական նաւերուն շքին մէջէն սահիլ անցնիլ : Այն անագին գանգուածները հոն իբրեւ լճի մը վրայ կեցած կըքնանան : Նաւատիները՝ տաճիկ գինուորաց պէս կարմիր կամ կապոյտ բաճկոններ հագած՝ անհոգ անհոգ նաւերու շրքունքին կըքրնած կեցեր են, կամ քէ ղեկին չորս դին կըլողան : Զինուորներով լեցուն մեծամեծ մակույկներ ցամաքէն դէպ ի նաւերը կըբրան ու կուգան, եւ ծովակալին գարդարուն աղուոր նաւակները քսանական բիաւարով նետի պէս կանցնին քովերնէս : Դահիր փաշա ծովապետն ու իր պաշտօնեաները մընագոյն ամդան հագեր են, գլուխին ֆես՝ որ բրդէ գլխանոց մըն է խոշոր ու ճակատնին կըգոցէ, մինչեւ աչքերնուն ալ վրայ կիջնայ, իբր քէ ամըջնային վսեմ ու գեղեցիկ փաքքոցը մեկդի ղեկնուն համար : Այն մարդիկը մաղձոտ ու անփոյք կերպ մը ունին, նստեր ծուխ կը խմեն՝ երկայն երկայն ու սաքէ ծայրով ծխափայտերէ : Նաւերէն քանի մը քայլ հեռու, Բումէլիի եզերքը՝ ուր որ ես ալ կըգտնուիմ, բազաւորին երկայն ու հոյակապ մեկ պալատին պատուհաններուն տակէն կանցնիմ : Այն պալատը հիմա անբնակ է, ու երկակնեցադ կենդանեաց բնակարանի կընմանի . վասն զի Վոսփորի ալիքները հովերուն սաստկութենէն քիչ մը որ բարձրանան՝ պատուհաններուն կըհասնին, ու իրենց փրփուրը պալատին ներքնայարկի սենեակները կընետան . մեծ սանդուխին աստիճանները շրով կըծածկուին, եւ ծովը վանդակապատ դռներէն ներս մինչեւ բակերն ու պարտեզները կըմտնէ : Հոն նաւակներու կայա-

calme des Anglaises ou des paysannes des montagnes de l'Helvétie, sont admirables; les enfants de même. Les caïques en sont pleins. Ils rapportent de leurs maisons de campagne des corbeilles de fleurs étalées sur la proue.

Nous commençons à tourner la pointe de Tophana, et à glisser à l'ombre des grands vaisseaux de guerre de la flotte ottomane, mouillée sur la côte d'Europe. Ces énormes masses dorment là comme sur un lac. Les matelots, vêtus, comme les soldats turcs, de vestes rouges ou bleues, sont nonchalamment accoudés sur les haubans, ou se baignent autour de la quille. De grandes chaloupes chargées de troupes vont et viennent de la terre aux vaisseaux; et les canots élégants du capitain-pacha, conduits par vingt rameurs, passent comme la flèche à côté de nous. L'amiral Tahir-Pacha et ses officiers sont vêtus de redingotes brunes et coiffés du fez, grand bonnet de laine rouge qu'ils enfoncez sur leurs fronts et sur leurs yeux, comme honteux d'avoir dépouillé le noble et gracieux turban. Ces hommes ont l'air mélancolique et résigné; ils fument leurs longues pipes à bout d'ambre. A quelques pas de ces vaisseaux, sur la rive d'Europe que je suis, je glisse sous les fenêtres d'un long et magnifique palais du sultan, inhabité maintenant. Il ressemble à un palais d'amphibies : les flots du Bosphore, pour peu qu'ils s'élèvent sous le vent, rasant les fenêtres, et jettent leur écume dans les appartements du rez-de-chaussée; les marches des perrons trempent dans l'eau; des portes grillées donnent entrée à la mer jusque dans les cours et les jardins. Là sont des remises pour les caïques et des bains pour les sultanes, qui peuvent nager dans la mer à l'abri des persiennes de leurs salons. Derrière ces cours maritimes, les jardins d'arbustes, de lilas et de roses s'élèvent en gradins successifs, portant des terrasses et des kiosques grillés et dorés. Ces



րան ու սուղաններուն համար բաղնիքներ կան որ կրնան ծովուն մէջ լողալ՝ իրենց դանդիաներուն քեղահիւս պատուհաններուն ետեւը : Այն ծովահայեաց բակերուն , մանր ծառոց պարտեզներուն ետեւի կողմը՝ աստիճան աստիճան բարձրացած երկեւանիներ (խլլաքներ) ու վարդենիներ կան , անոնց մէջ ալ ճեմնիքներ ու վանդակապատ եւ ոսկեգօծ պատշգամներ : Այն ծաղկալից բուրաստաններուն ծայրը կերբայ կաղնիներու դափնիներու ու բարտիներու մեծամեծ անտառներուն կրհասնի որ բլրոյն կողերը կը ծածկեն ու ժայռերուն հետ մեկտեղ մինչեւ անոր զագարը կելլեն : Քաղաւորին բնակարանները բաց են , ու պատուհաններէն կը տեսնեմ առաստաղներուն ոսկեգօծ փառաւոր զարդերը , բիւրեղայ ջահերը , բազմոցներն ու մետաքսե վարագոյրները : Կանաւոցին բնակարանները փայտե փորուած զարդարուն ու հաստ վանդակներով զոցուած են : Այն պալատէն կանցնիս չես անցնիր , մեկ շարքի վրայ կըսկիւն երեւնալ քաղաւորին գլխաւոր սիրելիներուն , ոստիկաններուն կամ փաշաներուն պալատները , տներն ու պարտեզները : Բոլորն ալ ծովուն վրայ քուն կըլլան ու կարծես բէ անոր զովորիւնը կը ծծեն : Անոնց պատուհանները բաց են . տերերին բազմոցներու վրայ նստած , ընդարձակ դանդիաներու մէջ որ ոսկիով ու մետաքսով կը փայլին , ծուխ կը քաշեն , կը խօսին , օշարակներ կը լամեն ու անցնելու ատեննիս մեզի կը նային : Անոնց բնակարաններուն ետեւն ալ աստիճան աստիճան ճեմնիքներ կան՝ սարփիւնաներով , մանր ծառերով ու ծաղկերներով զարդարուած : Շատ մը գերիներ փառաւոր հագուստներով նստած են ընդհանրապէս սանդուխներուն վրայ որ դեպի ծովը կիջնան . նաւակներն ալ իրենց բիւրեղներովը պատրաստ կեցած են սանդուխներուն քով , որպէս զի այն տներուն տերերն առնուն երբան : Ամեն տեղ ալ կանանոցները տանը մեկ բնն են՝ պարտեզներով կամ գաւիթներով երիկմարդկանց բնակարանէն քիչ մը զատուած , վանդակներով ալ զոցուած են :

Բոլոր այս տներն ու պալատները փայտե են , բայց զարդարուն անհամար պատշգամներ՝ ճեմնիքներ՝ վանդակապատ մուտքեր ունին , ու մեծամեծ ծառոց շուքերու , պատաստուկ բոյսերու եւ անտառախիտ յասմիկներու եւ վարդենիներու մէջ ընկղմած են : Վոսփորին ջրերը ամենուն քովէն ալ կանցնին ծփալով , շատին ներսը գաւիթներ կան որ ծովուն ջուրը հոն կը մտնէ ու կելլէ , նաւակներն ալ հոն կը պատասպարուին :

pelouses de fleurs vont se perdre dans de grands bois de chênes, de lauriers et de platanes qui couvrent les pentes, et s'élèvent avec les rochers jusqu'au sommet de la colline. Les appartements du sultan sont ouverts, et je vois à travers les fenêtres les riches moulures dorées des plafonds, les lustres de cristal, les divans et les rideaux de soie. Ceux du harem sont fermés par d'épais grillages de bois élégamment sculptés. Immédiatement après ce palais commence une série non interrompue de palais, de maisons et de jardins des principaux favoris, ministres ou pachas du Grand Seigneur. Tous dorment sur la mer, comme pour en aspirer la fraîcheur. Leurs fenêtres sont ouvertes; les maîtres sont assis sur des divans, dans de vastes salles toutes brillantes d'or et de soie; ils fument, causent, boivent des sorbets en nous regardant passer. Leurs appartements donnent aussi sur des terrasses en gradins chargées de treillis, d'arbustes et de fleurs. Les nombreux esclaves, en riches costumes, sont en général assis sur les marches d'escaliers que baigne la mer; et les caïques, armés de rameurs, sont au bord de ces escaliers, prêts à recevoir et à emporter les maîtres de ces demeures. Partout les harems forment une aile un peu séparée par des jardins ou des cours de l'appartement des hommes. Ils sont grillés.

Ces palais, ces maisons sont tout en bois, mais très-richement travaillé, avec des avant-toits, des galeries, des balustrades sans nombre, et tout noyés dans l'ombre des grands arbres, dans les plantes grimpantes, dans les bosquets de jasmins et de roses. Tous sont baignés par le courant du Bosphore, et ont des cours intérieures où l'eau de la mer pénètre et se renouvelle, et où les caïques sont à l'abri.



Վոսփորին ամեն տեղերն այ այնպես խոր են որ ծաղկըներուն անուշահոտութիւնը առնելու եւ ծառերու շուքին մէջ մեր բիւսարները հանգչեցրնելու չափ ծովեզերքի քովերէն կանցնինք : Մեծամեծ նաւեր այ մեր քովն կանցնին . եւ շատ անգամ անոնց կայմերը այս կամ այն ծառին ձիւղերուն, որքի մը սարփինային՝ կամ քե նաեւ պատուհանի մը վանդակափեղկերուն մէջ՝ կը մտնեն, ու ձիւղի մը կտոր կամ տանը մեկ պատարը կառնուն կրփախչին : Տներուն մէջտեղանքը երբեմն խումբ խումբ ծառեր կան՝ պզտիկ շէնքի մը չորս դին առած, երբեմն այ՛ բաղեղնապատ ու լուսաւետ ժայռերու անկիւններ որ լեռնակներուն կողերէն կիջնան ու մինչեւ ալիքներուն մէջ քանի մը ոտնաչափ տեղ կերկրենան : Միայն ատեն ատեն երկու հեռաւոր բլուրներու մէջտեղը աւելի խորունկ ու աւելի զոգաւոր ծովածոց մը կը տեսնես, ուր հեղեղատ մը կամ վտակ մը կը բախի : Անկեց ետքը զեղ մը կուգայ այն ծոցերուն տափարակ եզերքը շինուած՝ զեղեցկաշէն աղբիւրներովը, ոսկեգոյն կամ կապտագոյն գմբէք ունեցող մզկիթովը, որուն բերել մինարէին ծայրը մեծամեծ բարտի ծառերուն վերի ծայրերուն հետ կը խառնուի : Այն փոքրիկ ծովածոցերուն երկու կողմերն ու խորունկը կիսաբոլոր ձևով շարուած նկարէն տնակներ կան՝ իրենց գոյնզգոյն ձակատներովն ու քեռշքերովը . բլուրներուն վերերը մեծամեծ զիւղագրօսութեան տներ կան՝ քովերին կախաղանաւոր բուրաստաններով ու լայնագագաթ մայր ծառերով, որ երկնքին հետ կպածի պես երեւնալով՝ հորիզոնը կը կտրեն : Այն զեղերուն վարերը քանի մը ոտնաչափ լայնք միայն ունեցող ծովափունք կան՝ խիճերով կամ պինդ քարով շինուած . անոնց վրայ տնկուած բոյսերն են ժանտարզենի, որք, յասմիկ, եւ մինչեւ ծովը օրօրոցաձեւ պատշգամներ կը ձեւացրնեն, հոն կը պատսպարին նաւակները : Հոն խարիսխ ձգած կը կենան շատ մը մանր ու խոշոր ամեն ազգաց վաճառականներու նաւեր...

Բերդերէն անդին Վոսփորը կը լայննայ, ու երոպայի եւ Ասիոյ լեռները կը սկսին աւելի բարձր ու աւելի ապառաժուտ երեւնալ... Պեոյիւքտեքէն զեղեցիկ քաղաք մըն է ծովածոցի մը խորը շինուած, ուր Վոսփորը Սեւ ծովուն մէջ երբալով կորսուելէն առաջ՝ մէյմը կը խոտորի . երկու մընագոյն լեռներու կողերուն վրայ շարուած պարստաներն ու տները վարագորի մը պես տարածուած կերևանան, եւ ծովէն մինչեւ պարտեզներն ու ջրերը աղուոր ծովեզերք մը կայ : Չախ դին է

Le Bosphore est si profond partout, que nous passons assez près du bord pour respirer l'air embaumé des fleurs, et reposer nos rameurs à l'ombre des arbres. Les plus grands bâtiments passent aussi près de nous; et souvent une vergue d'un brick ou d'un vaisseau s'engage dans les branches d'un arbre, dans les treillis d'une vigne, ou même dans les persiennes d'une croisée, et fuit en emportant des lambeaux du feuillage ou de la maison. Ces maisons ne sont séparées les unes des autres que par des groupes d'arbres sur quelques petits corps avancés, ou par quelques angles de rochers couverts de lierre et de mousse, qui descendent des arêtes des collines et se prolongent de quelques pieds dans les flots. De temps en temps seulement, on trouve une anse plus profonde et plus creuse entre deux collines séparées, et fendues par le lit d'un torrent ou d'un ruisseau. Un village s'étend alors sur les bords aplanis de ces golfes, avec ses belles fontaines moresques, sa mosquée à coupole d'or ou d'azur, et son léger minaret qui confond sa cime dans celle des grands platanes. Les maisonnettes peintes s'élèvent en amphithéâtre des deux côtés et au fond de ces petits golfes, avec leurs façades et leurs kiosques à mille couleurs; sur la cime des collines, de grandes villas s'étendent, flanquées de jardins suspendus et de groupes de sapins à larges têtes, et terminent les horizons. Au pied de ces villages, est une grève ou un quai de granit de quelques pieds seulement de large; ces grèves sont plantées de sycomores, de vignes, de jasmins, et forment des berceaux jusque sur la mer, où les caïques s'abritent. Là sont à l'ancre des multitudes d'embarcations et de bricks de commerce de toutes les nations.

Au delà des châteaux, le Bosphore s'élargit; les montagnes de l'Europe et de l'Asie s'élèvent plus àpres et plus désertes. Buyukdéré, charmante ville au fond du golfe que forme le Bosphore au moment où il se coude pour aller se perdre dans la mer Noire, s'étend comme un rideau de palais et de villas sur les flancs de deux sombres montagnes. Un beau quai sépare les jardins et les maisons de la mer. La belle prairie de Buyukdéré sur la gauche, avec son groupe de merveilleux platanes, qui



Պեոյիւքտերէի գեղեցիկ հովիտը՝ իր նրաշալի սօսիներովը՝ որ բլուրներուն գլուխը պսակածն էր եւսնեն... Հոն կրտսնես շատ մը Հայեր որ իրենց զակրներովը անդադար կերքան ու կուգան՝ տերեւայից ու ծաղկայից նաւակներով. Վոսփօրին դէպ ի Սեւ ծովու միգապատ հորիզոնը երկրնցած տխուր ու նեղ բազուկը. ուրիշ լեռներու գօտիներ՝ ուր ոչ գեղեր կան եւ ոչ տներ, եւ իրենց բուխ անտառներովը մինչեւ ամպերը կը բարձրանան՝ իբր քէ սոսկալի սահման մը ըլլային մըրկածին ծովուն փորձրիկներուն ու Կոստանդնուպօստի ծովերուն սքանչելի հանդարտութեան մէջտեղը. երկու ծովեզերաց վրայ դիմացէ դիմաց մէյմէկ ամուր բերդեր՝ իրենց մարտկոցներովը, աշտարակներովն ու պսակներովը երկու հրուանդաններու դէպ ի առջեւ երկրնցած գլուխներուն մէյմէկ բազ կերևանան, անոնցմէ ալ ետքը երկու շարք ժայռեր՝ տեղ տեղ միայն անտառներով՝ կերքան Սեւ ծովուն կապօյտ կոնակացը մէջ կը բազուին. այս է անա Պեոյիւքտերէի տեսքը :

Այս իրիկուն Կոստանդնուպօստիս դարձած ժամանակս Ասիոյ ծովեզերքէն անցայ որ հազար անգամ աւելի գեղեցիկ կերևնայ աչքիս քան քէ Եւրոպայի ծովեզերքը : Ասիոյ կողմը գրեթէ ամենեւին բան չկայ որ մարդու ձեռագործ ըլլայ, ամեն բան բնութեան ըրածն է : Հոն ոչ Պեոյիւքտերէ կայ, ոչ Քարապիա, ոչ դեսպանաց պալատներ եւ ոչ Հայոց կամ Ֆրանկաց տներ. հոն եղածներն են լեռներ, կիրճեր, ձորակներ, ժայռերուն տակերը գոգածն տարածուած մարգեր, օձապտոյտ առուակներ, փրփրադէզ փայլուն ջրերով նեղեղատներ, ժայռերուն կողերէն կախուած, փոսերուն մէջ սահած, մինչեւ ծովեզերքի բազմաքիւ ծոցերը իջած ծառատունկեր. ամեն տեսակ ձեռով, գունով, տերեւներով, կանաչներով զարդարուած այնպիսի տեսարաններ որ պատկերանանին վրձինը քովէն անգամ չկրնար նկարել. տեղ տեղ մինակ մինակ կեցած՝ քանի մը հատ նաւավարի կամ տաճիկ պարտիզպաններու տներ... տեղ տեղ ձկնորսի ձերմակ առագաստներ որ խորունկ ծովածոցերուն մէջ կը սողան... անբիւ անհամար ձերմակ բոջուններ որ դաշտերուն ծայրերը իրենք զիրենք կը սրբեն, արծիւներ՝ որ լեռներուն վրայէն ծովուն վրայ բեատարած կը բռնին. գաղտնածածուկ խորշեր որ ժայռերով ու սոսկավիթիսար ծառերուն ճիւղերը բոյրովին գոցուած են, ծառերուն ճիւղերն ալ ամպի պէս տերեւներով ծածկուած՝ ալիքներուն վրայ կը կախուին ու նաւակներուն պատուարան կը լլան...

dentellent la cime des collines ; des Arméniens avec leurs enfants, arrivant ou partant sans cesse dans leurs caïques pleins de branchages et de fleurs ; le bras du Bosphore plus sombre et plus étroit que l'on commence à découvrir, étendu vers l'horizon brumeux de la mer Noire ; d'autres chaînes de montagnes, entièrement dégarnies de villages et de maisons, et s'élevant dans les nues avec leurs noires forêts, comme des limites redoutables, entre les orages de la mer des tempêtes et la magnifique sérénité des mers de Constantinople ; deux châteaux forts, en face l'un de l'autre, sur chaque rive, couronnant de leurs batteries, de leurs tours et de leurs créneaux les hauteurs avancées de deux sombres caps ; puis, enfin, une double ligne de rochers tachés de forêts, allant mourir dans les flots bleus de la mer Noire : voilà le coup d'œil de Buyukdéré.

Je viens de longer la côte d'Asie en rentrant ce soir à Constantinople, et je la trouve mille fois plus belle encore que la côte d'Europe. La côte d'Asie ne doit presque rien à l'homme, la nature y a tout fait. Il n'y a plus là ni Buyukdéré, ni Thérapia, ni palais d'ambassadeurs, ni ville d'Arméniens ou de Francs ; il n'y a que des montagnes, des gorges qui les séparent, des petits vallons tapissés de prairies qui se creusent entre les racines de rochers, des ruisseaux qui y serpentent, des torrents qui les blanchissent de leur écume, des forêts qui se suspendent à leurs flancs, qui glissent dans leurs ravines, qui descendent jusqu'aux bords des golfes nombreux de la côte ; une variété de formes, et de teintes, et de feuillage, et de verdure, que le pinceau du peintre de paysage ne pourrait même inventer ; quelques maisons isolées de matelots ou de jardiniers turcs... quelques voiles blanches de pêcheurs qui se traînent dans les anses profondes... d'innombrables volées d'oiseaux blancs qui s'es-suaient sur le bord des prés, des aigles qui planent du haut des montagnes sur la mer ; les criques les plus mystérieuses, entièrement fermées de rochers et de troncs d'arbres gigantesques, dont les rameaux, chargés de nuages de feuilles, se courbent sur les flots, et forment sur la mer des berceaux où les caïques s'enfoncent...



Ծովագերքին դիրքը մինչև սուլդան Մեհմեդ-մեհտին պալատը այս տեսքն ունի, ու կարծես քայն պալատով այ Վոսփորը՝ Զուլիցերիի լճի մը պես կը-գոցուի : Հոն Վոսփորին կերպարանքը կը փոխուի. բլուրները կը սկսին զարդարուիլ ու ցածնալ, եւ անոնց նեղ նեղ ձորերը աւելի կակուղ կերպով գոգ կառնուն...

Անկեց քիչ մը անդին Վոսփորի ալիքներուն բուն ծայրը բարձրացած կեցած է նորաշէն հոյակապ պալատը՝ ուր որ հիմա արքայն կը բնակի : Պէյերպլիին պալատը խոպական ճարտարապետութեամբ շինուած է՝ հնդիկ ու արաբացի զարդերով խառն. անագին ընդարձակութեամբ շէնք՝ այլ եւ այլ դստիկոններով, կողմնական բեւերով ու ներսի պարտեզներով. շէնքերուն ետեւը ծովէն մինչև լեռները մեծամեծ ածուներ կան՝ վարդենիներով ու շատրուաններով զարդարուած. իսկ ծովագերքէն մինչև պալատին պատուհանները նեղ քարայտակ մը կայ կրանիք քարէ : Հանդարտ հանդարտ անցայ եւ այն պալատին առջեւն, ուր որ մարմարաշէն ու ոսկե-ձեղուն յարկաց մէջ հոգ եւ արճալիքք անպակաս են. տեսայ արքան որ ծովահայեաց պատշգամի մը բազմոցին վրայ նստած էր. Անմեա փաշան այ՛ որ իր երիտասարդ մտերիմներէն մէկն է՝ քովը կեցած էր ոտքի վրայ : Քազաուորը երոպական հագուստնիս որ տեսա՛ մատով ցուցուց գմեզ Անմեա փաշային՝ ով ըլլայնիս հարցը-նելու կերպով մը : Եւ արեւելեան ձեռով բարեւտուի Ասիոյ ինքնակալին, անիկայ այ քաղցրութեամբ մը զիս բարեւեց : Պալատին բոլոր վանդակափեղկերն այ բաց էին, եւ այն շքեղաշուք բնակարանին մէջի հարուստ զարդարանքները պայծառափայլ գեղեցկութեամբ կը շողշողային : Կանանց բնակած բեր կամ հարեմը գոց էր. անագին ընդարձակութիւն ունի, բայց մէջի բնակիչներուն քանի հոգի ըլլալը չգիտցուի : Պալատին դրանը առջեւ՝ ծովուն վրայ երկու նաւակ կար՝ բոլոր ոսկեգօծ՝ ամեն մէկը քսանըջորս բիւ-վարով : Այս նաւակներուն ձեւը երոպական ամենափափուկ ախորժակին ու արեւելեան ճոխութեան յարմար է. մէկուն առաջքը՝ որ քսանըինգ ոտնաջափէն պակաս երկայնութիւն չունի, ոսկիէ կարապ մը ձեւացած է բեւատարած՝ որ կարծես քէ ալիքներուն վրայէն այն ոսկի նաւակը առեր կըրտանի. նաւակին ետեւի կողմը ոսկիէ սիւներու վրայ ամպհովանի մը կար մետաքսէ, եւ քազաուորին նստարանները քաշմիրի բանկագին շալեր էին. մէկայ նաւակին առաջքը ոսկիէ նետ մըն էր

Le rivage offre cet aspect jusqu'au château de Mahomet II, qui, de son côté aussi, semble fermer le Bosphore comme un lac de Suisse. Là il change de caractère : les collines moins âpres affaissent leurs croupes et creusent plus mollement leurs étroites vallées...

Un peu au delà, tout à fait sur le bord des flots du Bosphore, s'élève le magnifique palais nouveau, habité maintenant par le Grand Seigneur. Beglierbeg est un édifice dans le goût italien, mêlé de souvenirs indiens et moresques; immenses corps de logis à plusieurs étages, avec des ailes et des jardins intérieurs; de grands parterres plantés des roses et arrosés de jets d'eau s'étendent derrière les bâtiments, entre la montagne et le palais; un quai étroit en granit sépare les fenêtres de la mer. Je passai lentement sous ce palais, où veillent, sous le marbre et l'or, tant de soucis et tant de terreurs; j'aperçus le Grand Seigneur, assis sur un divan, dans un des kiosques sur la mer; Achmet-Pacha, un de ses plus jeunes favoris, était debout près de lui. Le sultan, frappé de l'habit européen, nous montra du doigt à Achmet-Pacha, comme pour lui demander qui nous étions. Je saluai le maître de l'Asie à la manière orientale; il me rendit gracieusement mon salut. Toutes les persiennes du palais étaient ouvertes, et l'on voyait étinceler les riches décorations de cette magnifique et délicieuse demeure. L'aile habitée par les femmes, ou le harem, était fermée; elle est immense, mais on ignore le nombre des femmes qui l'habitent. Deux caïques, entièrement dorés et montés de vingt-quatre rameurs chacun, étaient à la porte du palais, sur la mer. Ces caïques sont dignes du goût le plus exquis du dessin de l'Europe et de la magnificence de l'Orient: la proue de l'un d'eux, qui s'avancait d'au moins vingt-cinq pieds, était formée par un cygne d'or, les ailes étendues, qui semblait emporter la barque d'or sur les flots; un pavillon de soie monté sur des colonnes d'or formait la poupe, et de riches châles de cachemire servaient de siège pour le sultan; la proue du second caïque était une flèche d'or empennée qui semblait voler, détachée de l'arc, sur la mer. Je m'arrêtai longtemps, hors de la vue du sultan, à admirer ce palais et ces jardins: tout y semble disposé avec un goût parfait; je ne connais rien en Europe qui présente à l'œil plus de magnificence et de féerie dans des demeures



բեաւոր, որ կարծես թէ աղեղէն ելած կը բուշեր ծովուն երեսը : Թագաւորին աչքէն հեռանալով կանկ առի ու երկար ատեն գմայլած կը դիտէի այն պալատն ու պարտեզները. անոնց ամեն բանն ալ կատարեալ կիրք աստիճանով շինուած կերեւեալ. երոպայի թագաւորական պալատներէն մէկն ալ չեմ տեսած որ այնչափ ճոխութիւն ու կարգէ դուրս աղուորութիւն ունենայ. կարծես թէ ամեն մէկ բանն ալ դեռ նոր էր է արուեստաւորաց ձեռքէն, այնչափ մաքուր պայծառ ու երփնագեղ է. պալատին տանիքը ոսկեգօծ վանդակապատով գոցուած է, եւ ծխանաններն անգամ՝ որ երոպայի մէջ մեր ամեն հասարակաց շինուածքներուն շէնքը շնորհքը կը տանին՝ ոսկեգօծ ու խորշկէն սիւններ են, եւ իրենց աղուոր գլուխներովը պալատին զարդարանքը կաւելցրեն :

ԼԱՄԱՐՏԻՆ :

res royales : tout semblait sortir des mains de l'artiste, pur, rayonnant d'éclat et de peinture; les toits du palais sont masqués par des balustrades dorées, et les cheminées même, qui défigurent en Europe les lignes de tous nos édifices publics, étaient des colonnes dorées et cannelées, dont les élégants chapiteaux ajoutaient à la décoration de ce séjour.

LAMARTINE.

## Գ. ՀԱՆԳԻՍԱՐԱՆ ԱՇԽԱՐՀԱՇԷՆ ՄԱՐԳԿԱՆ

ՅԲԱՆՔԻՆ

(Շարայարութիւն եւ վերջ.)

Ֆրանքիինի բարեկամներէն մէկը՝ Գալիք Հարրէ՛՛՛՛՛ Ֆրանքիինը ի հաշտութիւն յորդորելէն ետեւ այսպիսի խօսք մըն ալ ըսեր էր թէ « Փոքորիկներու օրերը մօտենալու վրայ են, զլիտղ ճարը տես՝ բարեկամ. ըլլալիքը չգիտցուիր, մարդկանց փոփոխամտութիւնը յայտնի է : » Կերեւնայ թէ Գաղղիոյ մեծ խոռվութեան նշանները առնելով ըսած էր այն խորհրդաւոր խօսքերը : Ֆրանքիին այս նշանաւոր ու խեղացի պատասխանը տուաւ. « Ես որ իմ երկայն կեանքս լմրեցրնելու վրայ եմ՝ մնացած օրերուս վրայ մեծ համարում մը չունիմ : Մէկ ծրար չուխայէն պզտիկ կտոր մը ձեռքը մընացած վաճառականի պէս՝ ես ալ կրնամ ըսել թէ որովհետեւ ասիկայեօքի կտորն է, քեզի աման կը ծախսեմ, ուզած զինըղ տուր ու սո՛ւ : Մեր մարդը բերես իր ձերութիւնը՝ մարտիրոսանալէն աւելի աղէկ բանի մը չկարենայ բերել : »

Անգղիոյ առաջարկութիւնները Վոշինկրօնին ալ ընդունելի չեղան, ուստի եւ Ամերիկացոց ազգային Եղբայն միաձայն քուէարկութեամբը մերժուցան : Անոր վրայ Գաղղիոյ հետ հաստա-

տուած դաշնադրութեան աւետիսն ալ հասնելով՝ Ամերիկացոց ուրախութիւնը աւելցաւ, եւ մէկէն դեպքան անուանեցին Ֆրանքիինը Գաղղիոյ տերութեան քով. Գաղղիացիք ալ իրենց կողմանէ դեպքան մը յուզարկեցին Ամերիկա : Այն ատեն Անգղիացիք Գաղղիացոց դէմ ալ պատերազմ բացին, ինչպէս որ բնական էր. Գաղղիացիք ալ ըստ այնմ պատրաստութիւն տեսած էին : Յաջորդ տարին, այսինքն 1779ին, Սպանիացիք, անոնցմէ ետքն ալ Հոլանտացիք Գաղղիոյ հետ միաբանեցան. եւ այս երեք ժողովին զլիտուր տերութեանց նիզակակցութիւնը, նմանապէս Ռուսիոյ, Տանիմարքայի ու Շուէտի անկողմնաւոր կենալը, մեծ քաջալերութիւն եղան Ամերիկացոց : Վասն զի Անգղիան հարկադրեցաւ աշխարհիս ամեն կողմը իր ոյժը ցրուելու. եւ թեպէտ շատ սեղ, ու նաեւ Ամերիկայի մէջ քանի մը յաղթութիւններ ըրին իր ժովակալներն ու զօրավարները, բայց քաջն Վոշինկրօն՝ գաղղիացի Լաֆայէթ զօրավարին հետ մէկտեղ մեծամեծ յաղթութիւններ ըրաւ, Գաղղիան ալ Ֆրանքիինի միջնորդութեամբը շատ ըս-



տակ եւ վատող, զենք, զօրք ու զինուորական հագուստներ խրկեց :

Այն ատենները Ֆրանքլին ստեպ ստեպ ոտնացաւ կրտանջուէր . վախցաւ որ չըլլայ քէ իր մտքին յոգնածութիւնն ու մարմնոյն բույութիւնը պատճառ մը ըլլան հայրենեացը գործերուն ձախորդ երբայուն . ուստի Ամերիկայի ազգային ժողովն խնդրեց որ իրեն յաջորդ մը յուղարկեն : « Եօրանասունըհինգ տարեկանէն աւելի եմ, կըսեր, եւ կըտեսնեմ որ անցած ձմեռ քաշած ոտնացաւս զիս սաստիկ ուժէ ձգեց : Չեմ գիտեր՝ մտաւոր կարողութիւններս պակսեր են քէ չէ . հաւանական է որ ես այս բանս ուրիշներէն ետքը իմանամ... Հասարակաց գործողութիւններու մէջ մտայ, ու յիսուն տարի իմ հայրենակցացս վստահութեանը արժանի եղայ զանազան պաշտօններով . այս պատիւը իմ ջափաւոր փառասիրութեանս համար բաւական է . իսկ այսօրուան փնտռածս հանգրստութիւն է միայն, ուստի կըխնդրեմ որ ազգային ժողովը շնորհէ ինձի զայն՝ տեղս ուրիշ մէկը յուղարկելով : Միանգամայն կաղաչեմ ժողովոյն որ լաւ գիտնայ քէ պաշտօնէս հրաժարելուս պատճառ՝ ոչ մեր փառաւոր խնդրոյն յաջողութեանը վրայ տարակոյս մը ունենայս է, եւ ոչ անոր ծառայութենէն ձանձրանայս . վերը յիշածներէս ի գատ ուրիշ պատճառ չունիմ : Միտքս դրեր եմ որ հոս կենամ մինչեւ որ վերջանայ պատերազմը, որ քերեւս իմ մնացած կեանքէս ալ անդին քշէ . եւ քէ որ իմ յաջորդիս օգտակար ըլլայու փորձառութիւն մը ստացեր եմ, համարձակ կըհաղորդեմ իրեն եւ կօզնեմ քէ այն ազդեցութեամբն որ կըկարծուի քէ ունիմ, եւ քէ անոր ինձմէ ուզելիք խորհուրդներովը : »

Ամերիկացուց ժողովը Ֆրանքլինի խնդրոյն մտիկ չըրաւ . վասն զի յոյս ուներ քէ Աւստրիոյ ու Ռուսիոյ միջնորդութեամբը բանագնացութիւններ պիտի սկսին . ուստի ժողովոյն զանրեցը պատասխանեց իրեն քէ « Այսպիսի ատեն զձեզ այդ պաշտօնէն հեռացընելը վնասակար կընայ ըլլայ, որովհետեւ ժողովս կըփափաքի որ առաջիկայ բանագնացութեան մէջ ձեր ճարտարութիւնն ու փորձառութիւնը վայելէ : Չեզիպեաք եղած հանգստութիւնը կըզտնէք՝ երբոր այս վերջի ծառայութիւնն ալ ընէք Միացեալ Նահանգաց : » Ֆրանքլին դեմ չկեցաւ, ու քիչ ատենէն Ամերիկայի վիճակը որոշուեցաւ՝ Անգղիացուց Լորտ Քոռնուելլիս գորավարին յաղթուելովն ու անձնատուր ըլլալովը :

Տեսան Անգղիացիք որ վեց տարիէ ի վեր ըրած

պատերազմին անպտուղ ըլլալէն ի գատ՝ մեծամեծ վնասներու ալ պատճառ եղաւ իրենց . Գաղղիան, Սպանիան ու Հոլանտան շատ մը կղզիներ եւ ուրիշ ծովեզերեայ գաղթականութեանց երկիրներ առին ձեռքերնէն, շատ մըն ալ առնելու վրայ էին . Եւրոպայի մեկայ տերութիւններն ալ զինեալ անկողմնաորութեան մը մէջ կեցած՝ աւելի Անգղիոյ տկարանայուն կըփափաքէին . ստակը քիչցաւ, արհեստները դաղրեցան, վաճառականութիւնը պակսեցաւ . ուստի սկսան մտածել որ ճարջկայ, Ամերիկացուց ինքնիշխանութիւնը ձանջնայու է :

Վերջապէս 1782ին, Անգղիոյ նոր ոստիկանները որոշեցին որ հաշտութիւն ըլլայ եւ աշխարհս խաղաղի . մարդ յուղարկեցին Ֆրանքլինին, ու հետը խօսակցեցան . անիկայ ալ Գաղղիոյ տերութեան խորհրդակցութեամբը՝ խոհական ու ճարտար հնարքներով, անոյշ խօսքերով, արդար մտածութեամբ ու երկայնամիտ համբերութեամբ առաջ տարաւ այն մեծ գործողութիւնը, որ տարի ու կէս քշեց : Փարիզու մէջ Ֆրանքլինի ու իր հին բարեկամին Հարրիէի ստորագրութեամբը հաստատուած դաշնադրութեան ուժովը՝ Անգղիան ձանջցած եղաւ Ամերիկացուց ազատ ինքնիշխանութիւնը եւ օրինաւոր տիրապետութիւնը :

Գաշնադրութիւնը ստորագրուելէն առաջ արդէն բշխամութիւնները դաղրեր էին, եւ Գաղղիացուց զօրքերը դարձեր էին Ամերիկայէն . յետոյ Անգղիացիք ալ նոր-Եօրքէն քաշուեցան, եւ Ամերիկացիք իրենց զօրքը ցրուեցին : Քաշն եւ առաքինին Վոշինկրոն սրտաշարժ խօսքերով վերջին բարեւր տուաւ իր զինուորներուն . անկեց գնաց ազգային ժողովարանն ու իրեն յանձնուած սպարապետութեան պաշտօնէն հրաժարեցաւ : Գանրեցը դարձաւ ըսաւ իրեն . « Շատ մարդիկ եղած են որ իրենց մեծամեծ արդեանցը համար հասարակաց շնորհակալութեանը արժանի գտուեր են . իսկ հրամանքնիզ, Պարոն, մասնաւոր զովասանքի արժանի էք . ձեր հայրենեաց ազատութիւնն ու ինքնիշխանութիւնը հիմնելու եւ ձեռք բերելու գլխաւոր պատճառ ձեր ծառայութիւններն եղած են, ուստի եւ ազատ ազգի մը ամբողջ երախտագիտութեանը արժանի են : » ժողովը միաձայն հաւանութեամբ որոշեց որ կառավարութեան գլխաւոր քաղաքին մէջ Վոշինկրոնին ձիաւոր արձանը կանգնուի . քաղաքն ալ Վոշինկրոն ըսուեցաւ : Իսկ ինքը, անմահ ազատարարն հայրենեաց, հին ատենի Հռովմայեցուց պարգուրեանը հետևելով, գնաց իր կալուածները քաշուեցաւ, հոն եր-



կրագործական աշխատութեանց գլուխ կեցաւ, եւ հոն ապրեցաւ իբրև արդարև անշահասէր քաղաքացի եւ խոնարհամիտ իշխանատր :

Աղին Ֆրանքլին ալ իր հայրենեաց ինքնիշխանութիւնը հաստատելէն ետե՛ւ՝ եայեցաւ որ վաճառականութեան դաշնակցութիւններ ընէ երոպայի տէրութեանց հետ : Միանգամայն պզտիկուց ի վեր սորված առաքինութիւնները գործադրելու ետեւէ էր անդադար . ուստի սրջափ ալ ծանր գործողութեանց մէջ գտնուէր, իր անխոռով ու անշփոք կերպը չէր ձգեր, ու զինքը տեսնելու եկողները միշտ զուարբերես սիրով կընդունէր : Իր ամուսինը 1779ին վախճանեցաւ . երեք տարիէն ետեւ փափաք մը ցուցուց Հելլուեթիոսի այրույն հետ պատկուելու, բայց անկապ յանձն չառաւ :

Ամերիկայի նոր ձեռացած տէրութեան պիտոյքը կը պահանջէր որ Ֆրանքլին իր հայրենիքը դառնայ, եւ հոն սկսած անմխարանութիւններուն առաջն առնու : Իր տեղը Փարիզու մէջ դեռ պահ որոշուեցաւ ձեռքբերուն, որ կըսէր Ֆրանքլինին համար թէ « Այս մեծ մարդուն Ամերիկա դառնալը ամենանարկաւոր է : Թէ որ մեռնի, եւ իր մարմինը հոն փոխադրել կուտամ . զիտեմ որ անոր դագաղն անգամ կրնայ այնչապ կուսակցութիւնները միարանել : » Ֆրանքլին, որ իր հայրենեաց քաղաքակրթութիւնը այնչափ առաջ տարեր էր, եւ անոր ինքնիշխանութեան սկսելուն այնչափ զօրաւոր ձեռնառութիւն ըրեր էր, պէտք էր որ անոր սահմանադրութիւնն ալ կարգի գնէ ու սպազայ հաստատութեանը պատճառ ըլլայ :

Երբոր ազգի մը, տէրութեան մը, ընկերութեան մը մէջ օրէնք ու կարգ կանոն դնողները շատուր ու զօրաւոր են, իսկ այն օրէնքներն ու կանոնադրութիւնները գործադրել տուողները քիչուր ու տկար, հարկաւ օրէնքը կարհամարհուի եւ կարգն ու կանոնը կը փճանայ, կոխները կը շատանան, երկպառակութիւնները կը զօրանան : Այսպէս եղաւ նաեւ Ամերիկայի Միացեալ Նահանգաց կառավարութիւնը ի սկզբան՝ քանի որ սահմանադրութիւնը չաւ կերպով չէր հաստատուած : Ամեն բան ազգային ժողովոյն ձեռքն էր, եւ սակայն բան մը չէր կրնար կատարել . որոշմունքներ՝ վճիռներ կը ճանէր, բայց այն վճիռներուն զօրձարութիւններն ընել տալու կարողութիւն չուներ . որով այլ եւ այլ նահանգներն ալ կուգէին կեղրունական ժողովոյն իշխանութիւնէն գատուիլ ու ինքնագլուխ կառավարութիւն ունենալ : Այս մեծ պակասութեան վրայ իմաստութեամբ գանգատեր

էր մեծն Վոշինկրոն 1778ին, ըսելով թէ « Մեր կառավարութեան ոճը ժամացուցի շէնքին կրեանք « նմանցընել ու անկեց խրատ առնուլ : Ի՞նչ « օգուտ կը ըլլայ պզտիկ անխնէրը ճախարակները « աղէկ նայելէն՝ թէ որ մեծ անխը ջողագուի որ « բոլոր մեքենային շարժման առաջին պատճառ « այն է . . . Կարծեմ թէ առանց մարգարեական « հողի ալ ունենալու կրնայ մէկը գուշակել թէ « հիմակուան մեր կառավարութեան ծայրը ո՛ր « պիտի երբայ . . . Թէ որ ընդհանուր կառավարութիւնը գէշ կերպով ըլլայ, մանր գործողութիւններն ալ բովանդակ կը փրճանան, եւ մենք « պիտի ցաւինք որ մեր անմտութեամբ ու անհոգութեամբ մեր կորստեանը պատճառ եղանք : »

Ամերիկացուց այս վիճակը՝ խաղաղութիւն ըլլալէն ետքը անկի ալ գեշցեր էր . գրեթէ ամեն նահանգ ինքնագլուխ եղեր էր, ամեն մէկն ալ գանազան կուսակցութիւններ բաժնուէր էր : Եւ անա այն միջոցին էր որ Ֆրանքլին իր ողջամիտ խորհուրդներովն ու հայրենասիրութեամբը օգնութեան հասաւ Ամերիկացուց՝ եօթանասունութիւն տարեկան եղած ատենը :

Գաղղիայէն ելլելու օրերը քարի հիւանդու բենէն կը տանջուէր անտանելի կերպով . ուստի հարկադրեցաւ գրով տալ բազաւորին իր վերջի բարեւրագունին ալ իր պատգարակը յուղարկեց Վերսայլէն Փասսի որ անով հանգիստ ճամբայ ընէ մինչեւ Հաւր : Հոն նաւ մտաւ յուլիսի 28ին 1783ին երկու բոունքը հետն առած, ու սեպտեմբերի 14ին հասաւ Փիլադելֆիոյ դիմացը, եւ օրագրութեանը մէջ իբրև վերջին խօսք այս բառերը գրեց . « Բիւր գոհութիւն Աստուծոյ՝ այնչափ գրութեանցը համար : » Անպատմելի բան էր ժողովրդեան զինքը ընդունելու ատեն ցուցուցած ուրախութիւնը . բոլոր քաղաքին գանգակները զարկին, եւ ամենքը մէկ բերան կօրնեկին ու կը փառաւորէին զինքը՝ իբրև հաւասար Վոշինկրոնի ազատարար հայրենեաց : Մէկէն ի մէկ անուանեցին զինքը անգամ գերագոյն ժողովոյն Փիլադելֆիոյ, եւ քիչ ատենէն բոլոր Փենսիլվանիա նահանգին գաներեց . անկեց ետքն ալ 1787ին եղած հոջակաւոր աշխարհաժողովոյն մէջ, որոյ նախագահ Վոշինկրոնն էր՝ Ֆրանքլին իր նահանգին երեսփոխան ընտրուած էր : Եւ անա այն ժողովն էր որ Ամերիկայի սահմանադրութիւնը աչքէ անցուց, կարգաւորեց, հաստատեց ամենայն իմաստութեամբ, եւ անով կը կառավարուի մինչեւ հիմա գարմանալի դիւրութեամբ ու յաջողութեամբ : Ամերիկացիք միաձայն հաւանութեամբ ընդունե-



ցան ու հաստատեցին այն սահմանադրութիւնը, եւ Վոշինկրոնը անուանեցին գաներեց :

Ֆրանքլին տեսնելով իր հայրենեաց բարերադրութիւնը, խաղաղութիւնը, յառաջադիմութիւնը, եւ օրէ օր այլ մեծնալուն աներկբայելի նշանները, երանի կուտար ինքնիրեն ու կըսէր. « Աստուած տայ որ այս մեր մեծ մեքենային ընթացքը ոչ երբէք աւրուի . քէ որ ազգի մը երջանկութեանը պատճառ ըլլալու կառավարութիւն մը կայ նէ՛ կերելնայ քէ այս մեր ընտրածը պիտի ըլլայ : »

Երբոր իր գաներիցութեան տարին լմընցաւ, ու ինքը ուրստնուերկու տարեկան եղաւ, բոլորովին քաշուեցաւ կառավարութեան գործերէն, ու կը յուսար որ մնացած կեանքը հանգստութեամբ լմընցընէ : Բայց այն հանգստութիւնը խիստ քիչ քշեց : Հինգ տարիէ ի վեր ունեցած հիւանդութիւնը այնպէս սաստկացաւ որ կենացը վերջի տարին անկողնին մէջ անցուց, ու շատ մը բմբեցուցիչ զեղեր կառնէր որ ցաւերուն սաստկութիւնը չիմանայ . եւ սակայն իր բնական գուարբութիւնը ոչ երբէք պակսեցաւ, խնդրք միտքը ուրիշներուն աղէկութիւն ընել էր, եւ շատ անգամ կատակներով ու զուարճալի պատմութիւններ պատմելով՝ քովինները կըզմայեցընէր :

Կատարեալ փիլիսոփայութեանը հետ քրիստոնէական բարեպաշտութիւն մըն այ ունէր որ անով զօրացած՝ կըսէր քէ աշխարհիս ցաւերը յախտնական երջանկութեան հետ բազդատելով, հազիւ քէ ասեղի ծակծրկելուն չափ զօրութիւն ունին . եւ քանի որ կըմտածէր քէ երանաւեա կենաց դռնէն ներս մտնելու վրայ է, կըցնծար ուրախութեամբ : Մահուրէնէն երեք օր առաջ ըսաւ աղջկանը որ անկողինը շակրտէ, որպէս զի շէնքով շորնքով մեռնիմ կըսէր : Իր երկայն կենացը մէջ ընդունած բարիքներուն համար անդադար փառք կուտար Աստուծոյ, քաշած ցաւերն անգամ աղէկութեան տեղ կըղներ, վասն զի ասոնցմով աւելի զիւրաւ կը բաժնուիմ աշխարհէս կըսէր . եւ ապրիլի 17ին 1790ին կէս գիշերուն մօտ վախճանեցաւ անխտով զուարբութեամբ եւ աներկբայ յուսով :

